Մարինե Հարությունյան

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ
պ. գ. թ., ավագ գիտաշխատող

ԱՐՑԱԽԻ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ 18-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Հայ ժողովրդի բազմադարյա պատմության մեջ իր ուրույն տեղն ունի ձեռագրական մշակույթը: Գրչությունը, որպես արվեստի տեսակ, Հայաստանում կիրառվել է դեռևս հնագույն շրջանում՝ փորագրությունների ձևով: Այն առավել վառ դրսևորվեց միջնադարում:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանի տարբեր շրջանների (նաև՝ Արցախի) գրչատներում գրվել և ընդօրինակվել են բազմաթիվ ձեռագրեր, որոնց մի մասը՝ անընդհատ մղվող թուրք-պարսկական պատերազմների հետևանքով կամ ոչնչացվել կամ տարվել է այլ երկրներ: Փրկված հայերեն ձեռագրերի մի մասը պահվում է Մխիթարյան Միաբանության Վենետիկի ու Վիեննայի, Կ. Պոլսի, Երուսաղեմի, Անթիլասի, ինչպես նաև եվրոպական մի շարք գրադարաններում և մասնավոր հավաքածուներում: Այդ ձեռագրերի վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ կան Հակովբոս Տաշյանի (Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895), Համազասպ Ոսկյանի (Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանին ի Վիեննա, հ. Բ, Վիեննա, 1963), Հակոբ Թոփճյանի (Ցուցակ ձեռագրաց Դաղեան Խաչիկ վարդապետի, ժողոված 1878-1898, մասն Ա, Վաղարշապատ, 1898, մասն Բ, Վաղարշապատ, 1900), Օնիկ Եգանյանի (Գանձասարի հայերեն ձեռագրերի հավաքածուն, «Էջմիածին», 1971, N Դ, էջ 59-62) և այլոց կողմից կազմված ձեռագրացուցակներում:

Հատկանշական են նաև ՀՀ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում և Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում պահվող բազմաթիվ հայկական ձեռագրերը, որոնք հաղորդում են արժեքավոր տեղեկություններ հայկական հարուստ ձեռագրական մշակույթի պատմության վերաբերյալ:

Արցախի գրչագրության արժեքային համակարգում (նաև՝ սեպագիր արձանագրություններ) կարևորվում են Սարգիս արք. Հասան-Ջալալյանցի[1], Մակար եպս. Բարխուդարյանի[2], Մեսրոպ արք. Սմբատյանցի[3], Յովհ. եպս. Շահխաթունեանցի[4], Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի[5], Գարեգին Հովսեփյանի[6], Խաչիկ Դաղյանի[7], Ե. Լալայանի[8], Օ. Եգանյանի[9] և ուրիշների ձեռագրական հավաքածուների դերն ու նշանակությունը:

Սակայն, ինչպես վերոնշյալ գիտական հետազոտություններում, այնպես էլ ժամանակակից գրականության մեջ քիչ տեղեկություններ կան Արցախի XVIII դարի երկրորդ կեսի ձեռագրական մշակույթի, հատկապես՝ մեզ հասած ձեռագրերի վերաբերյալ:

---

1. Տե՛ս Ցուցակ գրչագիր Մատինից Սրբազան Սարգիս արք. Հասան-Ջալալեանցի, Մատենադարանի արխիվ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 228, վավ. 15:

2. Բարխուտարեանց Մ., Արցախ, Բաքու, 1895 (Ե., 1996):

3. Սբատեանց Մ., Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորա, Տփղիս, 1904:

4. Շահխաթունեանց Յովհ., Ստորագրութիւն Կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. Բ, էջմիածին, 1842:

5. Կարապետ եպիսկոպոս, Դոփեանք և Մելիք-Շահնազարեանք, Նյութեր հայ մելիքության մասին, պրակ. Բ, էջմիածին, 1914:

6. Հովսեփեան Գ., Հիշատակարանք ձեռագրաց, հ. Ա (Ե դարից մինչև 1250), Անթիլիաս, 1951:

7. Թօփճեան Յ., Ցուցակ ձեռագրաց Դաղեան Խաչիկ վարդապետի, ժողոված 1878-1898, մասն Ա, էջմիածին (Վաղարշապատ), 1898, մասն Բ, էջմիածին, 1900:

8. Լալաեան Ե., Գանձակի գավառ. պատմական համառոտ տեսություն, «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1899, N 5 (N1):

9. Եգանեան Օ., Գանձասարի հայերեն ձեռագրերի հավաքածուն, «էջմիածին», 1971, N Դ, էջ 59 - 62:

Այս հրապարակման մեջ ներկայացվել են՝ Արցախում XVIII դարի երկրորդ կեսին գրված ձեռագրերի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ՝ տարեթիվ, խորագիր, բովանդակություն, ժամանակ, գիր (բոլորգիր, նոտրգիր), գրություն (միասյուն, երկսյուն), թերթ, տեղ, գրիչ, տող, պատվիրատու, ստացող, հիշատակարաններ, կազմող, ծաղկող, մեծություն, կազմ, աստառ, մանրանկարչություն, ձեռագրի վիճակը, ծանոթագրություններ և այլն:

Վերջիններս պահվում են Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում և Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում:

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՁԵՌԱԳՐԵՐ

ՁԵՌԱԳԻՐ Հմր 38

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՎԱՅՐ՝ Գանձասար, 1760 թ.: **ԳՐԻՉ , ՍՏԱՑՈՂ՝** Դավիթ Թիֆլիզեցի: **ԿԱԶՄՈՂ՝** Տեր Ազարիա՞(կամ Ղազար): **ԹԵՐԹ՝** 104: **ՆՅՈՒԹ՝** թուղթ: **ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝** 17,2 X 10,5: **ԳՐՈՒԹՅՈՒՆ՝** միասյուն: **ԳԻՐ՝** նոտրգիր: **ՏՈՂ՝** 28-32: **ԿԱԶՄ՝** կտդ.: Հշտկրն. գրչի՝ էջ 1ա, 104բ, պահպանակ՝ Ա, Նորոգողի՝ 104բ (ԺԸ դ.), կազմողի՝ կազմի վրա (դրոշմված փակագիր): Վրացերեն գրություն՝ աստառին(Բ): **ՎԻՃԱԿԸ՝** լավ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ - «Աղօթք Տէր Բենիկ Վանանդեցւոյ վարդապետէ յԱղուանից կաթողիկոսէ[10] - «Տէր Աստուած սքանչելագործ սահման սիրոյ և ողորմութ, Քրիստոս թագաւոր՝ բարձրիլ որպէս հօր որդի, ստեղծիչ.... »[11]:

«Նորին հսկողի առ նոյն աղերս մաղբանաց բան՝ 'ի խորոց սրտից խօսք[12]»: «Նորին Գրիգորի միայնաւոր ճգնաւորի[13]....»:

---

10. ՄՄ, ձեռագիր Հմր 38, թ. 1բ:
11. ՄՄ, ձեռագիր Հմր 38, թ. 2ա:
12. ՄՄ, ձեռագիր Հմր 38, թ. 8ա, 11բ, 17ա, 23ա:
13. ՄՄ, ձեռագիր Հմր 38, թ. 61բ:

«Նորին Գրիգորի ’ի նոյն ողբս վայից»[14]: «Խոստովանութիւն Գրիգորի»[15]: «Մաղթանք վասն ապաշխարութեան»[16]: «Նորին Գրիգորի, առ բարեխօս զՄարիամ Սբ Աստուածածինն»[17]: «Նորին Գրիգորի Աղօթք, որ ’ի խորհրդեանն Սբ և մեղսաքաւիչ Պատարագին, մատուցանի Քրիստոս Աստծոյ մերոյ »[18]:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉԻ - «ի վայելումն զայս աղօթ մատուց գիրքս Դաւիթ վարդապետին Թիֆլիզեցւոյ ձեռամբ իւրոյ գրեաց շուտով[19]: Փառք պապիս եւ երկրպագութէ հօրս որդւոյ և հոգւոյն սրբոյ: Այժմ յաւիտեանս յաւիտենից սրբոյ զօրութէ և կարողութե յանգ եղեալ աւարտեցաւ գրքուկս աղօթից, որէ այլոց սրբոյ հաւաքումունք, Գրիգորի զօրազգի և Գրիգորի յաւատացեալ ճգնակիր վարդապետոյ.... մարտի ամսոյն.... գերահրաշ Առաջնոյն Գանձասարայ.... ձեռամբ Դաւթի մեղապարտ սևազգեստի իբրու վարդապետ կոչեցելոյ Թիֆլիզեցւոյ՝ ’ի շահ և ’ի յօգուտ ընթերցողաց և առ ժամանակաւ սրբասէր վայելողաց: Արդ ոք հանդիպեալ, յիշեցէք ’ի մաքուր յաղօթս մեր... և դուք յիշէք Այմերմէ որէ օրհնել յաւիտեանս Ամէն: Դաւիթ... գործոց բարեաց»[20]:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆՈՐՈԳՈՂԻ - «Ես անարժան Մահտեսի նորընծայ Մխիթար աբեղէս նորոգեցի վարպետի Սբ. Աղօթագիրը»[21]:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ - Աղօթագիրք Բենիկ Աղուանից կաթողիկոսի.... արտագիր գրեալ Դաւիթ Թիֆլիզեցւոյ ’ի Գանձասար.... 1760 թ.[22] (տիտղոսաթերթի վրա):

---

14. ՄՄ, ձեռագիր Հմր 38, թ. 63բ:
15. ՄՄ, ձեռագիր Հմր 38, թ. 65բ:
16. ՄՄ, ձեռագիր Հմր 38, թ. 69բ:
17. ՄՄ, ձեռագիր Հմր 38, թ. 70ա:
18. ՄՄ, ձեռագիր Հմր 38, թ. 71բ:
19. ՄՄ, ձեռագիր Հմր 38, թ. 1ա:
20. ՄՄ, ձեռագիր Հմր 38, թ. 104բ:
21. ՄՄ, ձեռագիր Հմր 38, թ. 104բ:
22. ՄՄ, ձեռագիր Հմր 38, թ. 2փ(բ):

ՁԵՌԱԳԻՐ Հմր 1078

ՄԱՇՏՈՑ

ՎԱՅՐ՝ Երից Մանկանց վանք, 1760 թ.: **ԳՐԻՉ՝** Աբրահամ Շաքեցի: **ԹԵՐԹ՝** 94: **ՆՅՈՒԹ՝** թուղթ: **ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝** 18,3 X 12: **ԳՐՈՒԹՅՈՒՆ՝** միասյուն: **ԳԻՐ՝** նոտրգիր: **ՏՈՂ՝** 24: Մնրնկր՝ կխ., լզ.: **ԿԱԶՄ՝** կտդ: **ԱՍՏԱՌ՝** շերտազարդ մետաքս: Հշտկրն. գրչի՝ էջ 87բ, 92բ, 94ա: **ՎԻՃԱԿԸ՝** լավ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ-«Վասն յաշակերտի Գրգոր Մեծի»- «Արարեալ զ շարադրուի կարգաց, չորեքտասան աստիճան վարդապետոյ ի լուսաւոր բանից, Աստուածաբանն, Եսայեալ, Մարգարէին, լուսաւոր մըտօք և մեկնօղ օրէն իմն տեսամբ կարգաւորեալ: Յաղագս գաւազան տալոյ աշակերտեալ սպասաւորաց բանին»:

«Եւ ել Մովսէս և խօսեցաւ»[23]: «Վասն Պօղօս Առաքելոյ»[24]: «Եւ խօսեցաւ տէր ընդ Մօվսէսի եւ ասէ....»[25]: «Ընթերցածս Յեսայեալ մարգարէ»[26]: «Աւետարան ըստ Ղուկասու»[27]: «Աւետարան ըստ Յօհաննու»[28]: «Պատասխանի ետ Մօսէս եւ ասէ, երբէ ոչ հաւատայցեն ինձ եւ ոչ լսիցեն ձայնի իմամ....»[29]: «Ընթերցածս Յերեմեայ մարգարէ»[30]: «Աւետարան ըստ Մատթէոսի»[31]: «Եւ պատուիրեաց Մովսէսի»[32]: «Եւ խօսեցաւ տէր ընդ Մովսէսի եւ ընդ Աhարօնի....»[33]: «Պետրոս Առաքեալ»[34]: «Շա-

23 ՄՄ, ձեռագիր Հմր 1078, թ. 6բ:
24 ՄՄ, ձեռագիր Հմր 1078, թ. 8բ, 12ա, 15բ, 18բ, 25ա:
25 ՄՄ, ձեռագիր Հմր 1078, թ. 13բ:
26 ՄՄ, ձեռագիր Հմր 1078, թ. 14ա, 17ա, 21բ, 33ա, 37բ, 79ա:
27 ՄՄ, ձեռագիր Հմր 1078, թ. 15բ, 28ա:
28 ՄՄ, ձեռագիր Հմր 1078, թ. 19ա, 63ա:
29 ՄՄ, ձեռագիր Հմր 1078, թ. 20ա:
30 ՄՄ, ձեռագիր Հմր 1078, թ. 21ա:
31 ՄՄ, ձեռագիր Հմր 1078, թ. 22բ, 40բ:
32 ՄՄ, ձեռագիր Հմր 1078, թ. 23բ:
33 ՄՄ, ձեռագիր Հմր 1078, թ. 26բ:
34 ՄՄ, ձեռագիր Հմր 1078, թ. 31ա, 34ա, 79բ:

րական»[35]: «Յակօբայ Առաքելոյն»[36]: «Օրինութիւն»[37]: «Աղօթք» - Ամենակարող Աստուած դու խոնարհեա ի մեր երկրպագութի եւ ի գործս[38]: «Աստուածային եւ երկնաւոր շնորհ»[39]: «Գոհանամք զքէն միածին որդի»[40]: «Սահմանս եւ օրէնսդրութիւնս, զոր ուսուցանէ եպիսկոպոսութեան ձեռնադրեաց»[41]: «Զգուշութիւն»[42]: «Կանօն յօրժամ զկաթողիկոս ձեռնադրեն»[43]: «Յորժամ հանդերձեալ լինին բարձրացուցանել զոք իպատիւ կաթողիկոսք տանս Հայոց»[44]: «Ընթերցածս Յեզեկիէլի մարգարէ»[45]: «Աստուած արարիչ»[46]: «Շարական»[47]: «Կանօն ապաշխարող օրնելոյ»[48]:

ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ - ճակատազարդ[49], լուսանցազարդ (թռչուն)[50], կիսախորան51:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ - «Մաշտոց նոտրագիր, գրեալ ’ի թուղթ բամբակի Յաբրահամ եպսէ. Շաքեցւոյ յամի 1760»[52]:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉԻ - «Եւ արդ սկսեալ եղև գիրքս.... ’ի հայրապետուէ տանս Աղուանից Տէր Ներսէս Սրբազան կաթո-

35 ՄՄ, ձեռագիր Հմր 1078, թ. 36ա:
36 ՄՄ, ձեռագիր Հմր 1078, թ. 38ա:
37 ՄՄ, ձեռագիր Հմր 1078, թ. 42ա:
38 ՄՄ, ձեռագիր Հմր 1078, թ. 56բ:
39 ՄՄ, ձեռագիր Հմր 1078, թ. 59բ:
40 ՄՄ, ձեռագիր Հմր 1078, թ. 60ա:
41 ՄՄ, ձեռագիր Հմր 1078, թ. 68բ:
42 ՄՄ, ձեռագիր Հմր 1078, թ. 69բ:
43 ՄՄ, ձեռագիր Հմր 1078, թ. 73ա:
44 ՄՄ, ձեռագիր Հմր 1078, թ. 73ա:
45 ՄՄ, ձեռագիր Հմր 1078, թ. 78բ, 88բ:
46 ՄՄ, ձեռագիր Հմր 1078, թ. 81բ:
47 ՄՄ, ձեռագիր Հմր 1078, թ. 85բ:
48 ՄՄ, ձեռագիր Հմր 1078, թ. 88ա:
49 ՄՄ, ձեռագիր Հմր 1078, թ. 3ա, 42ա, 94ա:
50 ՄՄ, ձեռագիր Հմր 1078, թ. 3ա, 42ա:
51 ՄՄ, ձեռագիր Հմր 1078, թ. 42ա, 94ա:
52 ՄՄ, ձեռագիր Հմր 1078, թ. 2ա:

ղիկոսի օրինակել յընտիր եւ ստոյգ յօրինակէ աշխատասիրութեամբ եւ երկասիրութեամբ Տէր Աբրահամս յեպիսկոպոսէ Շաքեցւոյ անդէալ ժամանակի Սբ վկայարանի, Սբ Երից Մանկանց... նաեւ աղաչ եմ յիշել մերոյ հայր եւ զիոգի, նուաստիս ընդ ծնօղքս: Որ եմ նօտար եւ սպասաւոր Սրբազանիս ես գրիչս: Եւ եթէ գտանիցիաս սխալանս, խնդրեմ ներել....»[53]: «Յիշեցէք ՚ի Քրիստոս զանարժան Աբրահամս յեպիսկոպոս գրիչս Շաքեցւոյ»[54]:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ - Էջ 94ա-ում թողած մեկ հիշատակարանում նշվում է, որ ձեռագիրը գրվել էր դեռևս XIII դ. առաջին կեսին՝ Աղվանից Ներսես կաթողիկոսի օրոք: Փաստ ընդունելով ձեռագրի էջ 2ա-ի հիշատակագրությունը՝ կարծում ենք, որ այն հավանաբար օրինակվել էր XVIII դ.:

ՁԵՌԱԳԻՐ Հմր 3044
ԱՒԵՏԱՐԱՆ

(Հայատառ պարսկերեն)

ՎԱՅՐ՝ Գանձակ, 1779: **ԳՐԻՉ՝** Միքայէլ Աստապատցի: **ԹԵՐԹ՝** 143: **ՆՅՈՒԹ՝** թուղթ: **ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝** 21,1 X 16,9: **ԳՐՈՒԹՅՈՒՆ՝** միասին: **ԳԻՐ՝** նոտրգիր: **ՏՈՂ՝** 36: **ԿԱԶՄ՝** կտ: Հշտկրն. գրչի՝ էջ 10բ, 141 ա, 143 բ: Թերթերի ծայրերը՝ մաշած, որոշ տողեր անընթեռնելի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ - Ձեռագրի բովանդակությունը գրված է հայատառ պարսկերեն: Վերջինս բաժանված է հետևյալ գլուխների՝ «Յեսոյ ալմասե ազմաթի Քասլ ավալ»[55]: «Շըրուի ավալ, ինճել շարիֆ եսոյալ մասե փըսար խուդայ»[56]: «Ինճիլ փաք լըս Ֆասլ»[57]: «Նազդիք շօտէիտ Ֆաթիր խօրան քի մի խունդ»[58]: «Ինճիլ փաք եսոյ ալմասե ուհաննայ»[59]:

---

53 ՄՄ, ձեռագիր Հմր 1078, թ. 87բ:

54 ՄՄ, ձեռագիր Հմր 1078, թ. 92բ:

55 ՄՄ, ձեռագիր Հմր 3044, թ. 11ա:

56 ՄՄ, ձեռագիր Հմր 3044, թ. 54ա:

57 ՄՄ, ձեռագիր Հմր 3044, թ. 100բ-109ա:

58 ՄՄ, ձեռագիր Հմր 3044, թ. 109ա:

59 ՄՄ, ձեռագիր Հմր 3044, թ. 114բ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉԻ - «Վերջին գրող Սբ Աւետարանիս Տէր Միքայէլ Ասպատացի որ է Գանճայ բնակեալ, տեսի լուսահոգի Օւանիսին եւ Յակոբին, որոնք ևս էին գրեալ եւ ես նոցուն օրինակի գրեսցի.... Հոգի Սբ օգնեաց բազմաց մեզ....»[60]:

Նույն բովանդակությամբ հիշատակարան կա էջ 143 բ - «Վերջին գրող Սբ Աւետարանիս Տէր Միքայէլ Ասպատացի բնակեալ ի Գանճայ քաղաքն»: Գրության շարունակությունը գրված է ծածկագրով:

«Ես Տէր Միքայիլս գրեցի օրինակի լուսահոգի հաքիմ Յակոբի, որ գրել էր... վաղուց և մենք գրեցինք Սբ Աւետարանս ի քաղաքն Գանճայ, ի հայրապետութեան տէր Սիմէօնի....»[61]:

ՁԵՌԱԳԻՐ Հմր 3592
ՁԵԻՔ ՆԱՄԱԿԱՑ ԵՒ ԳՐՈՒԹԵԱՆՑ

ՎԱՅՐ՝ Ճալէթ գիւղ (Հիւսիսային Արցախ), 1791թ.: **ԳՐԻՉ՝** Աբրահամ, Յարութիւն վրդ.ք: **ՍՏԱՑՈՂ՝** Կարապետ: **ԹԵՐԹ՝** 81: **ՆՅՈՒԹ՝** թուղթ: **ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝** 16 X 12: **ԳՐՈՒԹՅՈՒՆ՝** միասիւն: **ԳԻՐ՝** նոտրգիր: **ՏՈՂ՝** 20: **ԿԱԶՄ՝** կս.: Հշտկրն. գրչի՝ էջ 57բ-58ա, 64բ, ստացողի՝ էջ 64բ: **ՎԻՃԱԿԸ՝** բավարար, կազմի կաշին՝ քերծուած-մաշուած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ - Աշխատությունը տարաբնույթ գրությունների, խնդրագրերի և նամակների ժողովածու է՝ ուղղված Աստծո ողորմությանը, Էջմիածնի կաթողիկոսին, Աղուանից կաթողիկոսին և այլն: Կան նաև անվանի կաթողիկոսների, Երուսաղեմի ժողովների գրություններ:

«Թուղթ ողորմութենէ խնդրելոյ: Եւ ընդ Աստուածային օրինութեան նամակիս»[62]: «Թուղթ շնորհակալութեան»[63]: «Թուղթ ժողովք կարգաւորաց»[64]: «Գրութիւն Էջմիածնոյ կաթողիկո-

---

60 ՄՄ, ձեռագիր Հմր 3044, թ. 10բ:
61 ՄՄ, ձեռագիր Հմր 3044, թ. 141ա:
62 ՄՄ, ձեռագիր Հմր 3592 թ. 3ա:
63 ՄՄ, ձեռագիր Հմր 3592 թ. 5ա, 47բ:
64 ՄՄ, ձեռագիր Հմր 3592 թ. 7ա:

սին»[65]: «Գրութիւն Աղուանից կաթողիկոսին»[66]: «Թուղթ քահանայից, Յս. Քրիստոսի ծառայ տէր Ներսէս կաթողիկոս Աղուանից»[67]: «Թուղթ հոգևոր տիրաց գրելոյ»[68]: «Թուղթ պարտէ տէրանց»[69]: «Թուղթ ծանուցումն աղքատաց»[70]: «Թուղթ օրհնութեան»[71]: «Թուղթ վկայական ծայրագոյնի»[72]: «Թուղթ բանադրանց»[73]: «Թուղթ բանադրանց և նզովեց»[74]: «Թուղթ բանադրանց արձակման»[75]: «Թուղթ Երուսաղէմայ ժողովք»[76]: «Թուղթ վարդապետաց ժողովքի, Յս. Քրիստոսի ծառայ տէր կաթողիկոս Աղուանից»[77]: «Յիսուս Քրիստոսի ծառայք Երեմեայ և Սիմէօն կաթողիկոսանք երկրիս Աղուանից»[78]: «Յիսուս Քրիստոսի ծառայ Աղուանից կաթողիկոս»[79]: «Թուղթ Կուսանաց անապատի ժողովք»[80]: «Թուղթ մեծի նուիրական կաթողիկոս Աղուանից»[81]:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉԻ – «Այս Աստուծաշունչ գիրքս է Շաքեցի Աբրահամ վարդապետին, ով ոք որ հանդիպի այս սուրբ գրքոյս և ընթերնացաւ.... յիշեսցէ յարժանաւոր յաղօթս իւր զվերս գրեալ վարդապետն և ծնողս նորին՝ Զաքարիային, ...եւ լսեցի զօրհնեալ ձայնն Յս. Քրիստոսի....»[82]: «Գրեցաւ գիրքս ձեռամբ

65 ՄՄ, ձեռագիր Հմր 3592 թ. 12բ:
66 ՄՄ, ձեռագիր Հմր 3592 թ. 13ա:
67 ՄՄ, ձեռագիր Հմր 3592 թ. 19ա:
68 ՄՄ, ձեռագիր Հմր 3592 թ. 19բ:
69 ՄՄ, ձեռագիր Հմր 3592 թ. 22ա:
70 ՄՄ, ձեռագիր Հմր 3592 թ. 22բ, 24ա:
71 ՄՄ, ձեռագիր Հմր 3592 թ. 28ա:
72 ՄՄ, ձեռագիր Հմր 3592 թ. 28բ:
73 ՄՄ, ձեռագիր Հմր 3592 թ. 32բ, 35ա:
74 ՄՄ, ձեռագիր Հմր 3592 թ. 36բ:
75 ՄՄ, ձեռագիր Հմր 3592 թ. 37ա:
76 ՄՄ, ձեռագիր Հմր 3592 թ. 37բ:
77 ՄՄ, ձեռագիր Հմր 3592 թ. 49բ-50ա:
78 ՄՄ, ձեռագիր Հմր 3592 թ. 54բ:
79 ՄՄ, ձեռագիր Հմր 3592 թ. 58ա:
80 ՄՄ, ձեռագիր Հմր 3592 թ. 59ա:
81 ՄՄ, ձեռագիր Հմր 3592 թ. 75ա:
82 ՄՄ, ձեռագիր Հմր 3592 թ. 57բ-58ա:

Աբրահամ, Յարութիւն անարժան վարդապետացս Շաքեցւոյ ’ի ամի.... թուին հայոց, յուլիս ամսոյ երկուսն, այս դրան Սբ Աստուածածնի և թուխ մանկան Սբ Նշանի ’ի ներս գիւղին Ճալէթու»[83]:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՍՏԱՑՈՂԻ - «Ես տիրացու Կարապետս գրեցի այս գիրս ի շտեմարանն Աւետանց»[84]:

ՁԵՌԱԳԻՐ Հմր 3971
ՄԱՇՏՈՑ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ

ՎԱՅՐ՝ Գանձասար, 1766 թ.: **ԳՐԻՉ՝** Աբրահամ Շաքեցի: **ՍՏԱՑՈՂ՝** Աղուանից կթղ.: **ԹԵՐԹ՝** 37: **ՆՅՈՒԹ՝** թուղթ: **ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝** 17,5 X 13: **ԳՐՈՒԹՅՈՒՆ՝** միասիւն: **ԳԻՐ՝** նոտրգիր: **ՏՈՂ՝** 23: Մնընկր՝ կխ, լզ: **ԿԱՋՄ՝** կտդ: **ԱՍՏԱՌ՝** կարմիր մետաքս: Հշտկրն. գրչի՝ էջ 32բ, 37ա, հետագայի՝ 37բ (1888 թ.): **ՎԻՃԱԿԸ՝** բավարար: 33 ա, 33բ, 34ա էջերը՝ անընթեռնելի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ - «Օրինութիւն եպիսկոպոսի»[85]: «Խօսք հայրապետի»[86]: «Վասն ի վերուստ խաղաղութեան»[87]: «Վասն միածին որդւոյ Տէր մեր և փրկիչ Յիսուս Քրիստոս»[88]: «Աղօթք»[89]: «Ձեռնադրութիւն»[90]:

ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ - Ճակատազարդ[91], լուսանցազարդ (թռչուն[92]):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉԻ – «Ընստացօղ Սբ գրոյս երիցս երանեալ և երջանիկ գիտապետն մեր զոր Կաթողիկոսն Աղուանից

---

83 ՄՄ, ձեռագիր Հմր 3592 թ. 64բ:
84 ՄՄ, ձեռագիր Հմր 3592 թ. 64բ:
85 ՄՄ, ձեռագիր Հմր 3971, թ. 1բ, 3բ:
86 ՄՄ, ձեռագիր Հմր 3971, թ. 9ա, 15ա:
87 ՄՄ, ձեռագիր Հմր 3971, թ. 18ա:
88 ՄՄ, ձեռագիր Հմր 3971, թ. 19բ:
89 ՄՄ, ձեռագիր Հմր 3971, թ. 24ա:
90 ՄՄ, ձեռագիր Հմր 3971, թ. 28բ:
91 ՄՄ, ձեռագիր Հմր 3971, թ. 1բ:
92 ՄՄ, ձեռագիր Հմր 3971, թ. 1բ, 3 բ, 7ա:

և զսուրբ իւր Գանձասար.... Ընդ սոցին եւ զիս զանպիտան Աբրահամ եպս. Շաքեցի գծողս և զիմ ծնօղան յիշեցէք և Աստուած զձեզ յիշէ յիւր յարքայութեանն, Ամէն»[93]:

89«Եւ արդ սկսեալ եղև գրքուկս Ձեռնադրութեան.... ստոյգ յօրինակէ աշխատասիրութեամբ և երկասիրութեամբ տէր Աբրահամու Արքեպս. Շաքեցւոյ անդէալ ժամանակի ռահվիրան Սբ վկայարանի Սրբոյ Երից Մանկանց.... ուստի աղերսեմ զհանդիպօղս Սբ գրոյս օրինակելով, յիշել հայր մերի եւ զհօգի նուաստիս ընդ ծնօղքս....»[94]:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ - «1888 ամի 'ի 17 փետրվարի 'ի Սբ վանս Գանձասար վանահայր Ստեփաննոս վարդապետ»[95]:

ՁԵՌԱԳԻՐ Հմր 6234

ԲԺՇԿԱՐԱՆ

ՎԱՅՐ՝ Գանձակ, 1783թ.: **ԳՐԻՉ՝** Միքայէլ Աստապատեցի: **ԹԵՐԹ՝** 129: **ՆՅՈՒԹ՝** թուղթ: **ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝** 35 X 21: **ԳՐՈՒԹՅՈՒՆ՝** միասիւն: **ԳԻՐ՝** նոտրգիր: **ՏՈՂ՝** 31-51: **ԿԱԶՄ՝** լս.: Հշտկրն. գրչի՝ էջ 3 ա: **ՎԻՃԱԿԸ՝** բավարար, 1ա, 1բ, 2ա, 3բ, 128ա, 128 բ, 129ա, 129բ էջերի ծայրերը՝ վնասված:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ - «Ամիրդովլաթայ Ամասիացւոյ Անգիտաց անպէտ, Ախրապատին (դեղաբանություն)»[96]: «Դեղահաբ գլխացաուի», «Դեղահաբ հազի»[97]: «Վասն պէս պէս ցաւոց»[98]: «Վասն սրտի դողալուն»[99]: «Աչացաւ»[100]: «Ականջա-

93 ՄՄ, ձեռագիր Հմր 3971, թ. 32բ:
94 ՄՄ, ձեռագիր Հմր 3971, թ. 37ա:
95 ՄՄ, ձեռագիր Հմր 3971, թ. 37բ:
96 ՄՄ, ձեռագիր Հմր 6234, թ. 60ա:
97 ՄՄ, ձեռագիր Հմր 6234, թ. թ. 78ա:
98 ՄՄ, ձեռագիր Հմր 6234, թ. 88 ա - 90բ:
99 ՄՄ, ձեռագիր Հմր 6234, թ. 92ա:
100 ՄՄ, ձեռագիր Հմր 6234, թ. 93ա:

ցաւ»[101]: «Փաձեղացաւ»[102]: «Երիկամացաւ»[103]: «Ոսկերքացաւ»[104]: «Ջերման և տենդեցն»[105]: «Նշանք ցաւաց»[106]: «Բժկութենէ Մանուշակի ձեթով»[107]: «Վասն քորին և քոսին»[108]: «Վասն ցաւերուն ծնկներուն և ոտներուն»[109]: «Վասն մեղրաջրի»[110]:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉԻ - «....գրեալ.... մօտն Գանճայ քաղաքի ձեռամբ ամենամեղաւոր Միքայէլ Աստապատեցի, որ եմ ի տան է Ջանվալիեան եւ որդի Մարգարէին եւ եղբայրն՝ Վարդազարն եւ եղբօր որդին իմ՝ Ստեփանն.... լուսահոգի Ամիրդօվլաթ բժիշկն թարգմանեալ էր ի հայ լեզու ի Կոստանդինու Պոլիս և Կաթաղիկոս Սբ Էջմիածնի Տէր Սարգսին....»[111]:

ՁԵՌԱԳԻՐ Հմր 7428

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՎԱՅՐ՝ Շուշի բերդ, 1791-1792 թ.: **ԳՐԻՉ՝** Միքայէլ Աստապատեցի: **ԹԵՐԹ՝** 154: **ՆՅՈՒԹ՝** թուղթ: **ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝** 33,2 X 21,2: **ԳՐՈՒԹՅՈՒՆ՝** երկսիւն: **ԳԻՐ՝** բոլորգիր: **ՏՈՂ՝** 37-40: **ԿԱՋՄ՝** ստվարաթուղութ: Հշտկրն. գրչի՝ էջ 4 ա, 72ա, 103ա: **ՎԻՃԱԿԸ՝** լավ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ - «Միքայէլ Աստապատեցւոյ Տոմար բժշկութեան, Բժշկարան»: -«Աչից դեղ խիստ ազնիւ»[112]: «Վասն

---

101 ՄՄ, ձեռագիր Հմր 6234, թ. 93բ:
102 ՄՄ, ձեռագիր Հմր 6234, թ. 100ա:
103 ՄՄ, ձեռագիր Հմր 6234, թ. 102 ա:
104 ՄՄ, ձեռագիր Հմր 6234, թ. 103 բ:
105 ՄՄ, ձեռագիր Հմր 6234, թ. 104 բ:
106 ՄՄ, ձեռագիր Հմր 6234, թ. 108 ա:
107 ՄՄ, ձեռագիր Հմր 6234, թ. 117ա:
108 ՄՄ, ձեռագիր Հմր 6234, թ. 120բ:
109 ՄՄ, ձեռագիր Հմր 6234, թ. 121բ:
110 ՄՄ, ձեռագիր Հմր 6234, թ. 127 բ:
111 ՄՄ, ձեռագիր Հմր 6234, թ. 3ա:
112 ՄՄ, ձեռագիր Հմր 7428, թ. 4ա:

ստամոքն այտոցի»[113]: «Վասն լերդացաւ»[114]: «Վասն գլխացաւին»[115]: «Աչացաւ»[116]: «Տոմարական աղիւսակ»[117]: «Վասն ականջի ցաւերին» - «Ականջն որ խլանաց, կամ ջուր երբայ մնաց մէջն և չի լսէ, առ գլուխ սխտոր ծեծե, գդալ քացախ և գդալ ջուր և ապակէ մէջ եփես, քամէ պարզ ջուրն շիշի մէջ ածէ յետոյ քիչ-քիչ քսել....»[118]: «Վասն բերանի խոցերին»[119]: «Օձն որ մարդն խայթէ» - «....թթու բան լից վրայն խնձորի տերևն ծեծէ կապէ վրայն նաև ծեծած տերևն խնձորի և ջուրն հան խառնէ գինին և տուր խմէ. օձահարի և այլ գազանիհարի շատվարն (խառնուրդ) լաւէ և փորձաց... օձն որ մարդոյ բերանն կշտում չի լաւանայ, բողկն ծեծէ ջուրն խառնէ զաֆրանն և խմել տուր....»[120]: «Հապ փորացաւի»[121]: «Սպեղանիք զանազան կազմեալ, օրինակէ»[122]: «Հապ հազի»[123]: «Թուական Սարկաւագի»[124]: «Տոմարական գործիք»[125] (Լուսնացոյց):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉԻ - «Տօմար բժկութե արարեալ վաղեմի իմաստնոց.....ձեռամբ յօգնամեղ Միքայէլ քահանայի...., օգնեա Սբ Հոգի Աստուած իմ»[126]: «Բժկարան գիրք արարեալ վաղեմի ժամանակաց իւր այբուբեն գրոցն օրինակ է՝ ձեռամբ Տէր Միքայէլէ Աստապատեցւոյ Շուշի բերդն ՍՄԽԱ թուին»[127]: «Տէր Միքայէլ գրողս յիշեա ՍՄԽԱ թուին Շուշու բերդս»[128]:

---

113 ՄՄ, ձեռագիր Հմր 7428, թ. 15ա:
114 ՄՄ, ձեռագիր Հմր 7428, թ. 17ա:
115 ՄՄ, ձեռագիր Հմր 7428, թ. 30ա:
116 ՄՄ, ձեռագիր Հմր 7428, թ. 42ա:
117 ՄՄ, ձեռագիր Հմր 7428, թ. 61ա-71բ, 77բ, 123բ -124բ, 151ա-152ա:
118 ՄՄ, ձեռագիր Հմր 7428, թ. 73բ:
119 ՄՄ, ձեռագիր Հմր 7428, թ. 74ա:
120 ՄՄ, ձեռագիր Հմր 7428, թ. 95ա:
121 ՄՄ, ձեռագիր Հմր 7428, թ. 103բ:
122 ՄՄ, ձեռագիր Հմր 7428, թ. 107բ:
123 ՄՄ, ձեռագիր Հմր 7428, թ. 117բ:
124 ՄՄ, ձեռագիր Հմր 7428, թ. 125ա-126բ:
125 ՄՄ, ձեռագիր Հմր 7428, թ. 127ա:
126 ՄՄ, ձեռագիր Հմր 7428, թ. 4ա:
127 ՄՄ, ձեռագիր Հմր 7428, թ. 72ա:
128 ՄՄ, ձեռագիր Հմր 7428, թ. 103ա:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ - Ձեռագրում ուշագրավ է «Լուսնացոյց»-ը: Այն ներկայացված է աղյուսակներով, որոնցում գրված են տարեթվերը՝ սկսած 1774թ. մինչև 1912թ.: Տարեթվերին զուգահեռ նշված են ամիսները՝ ըստ համաստեղությունների (խոյ, ցուլ, երկվորյակ, խեցգետին, առյուծ, կույս և այլն)-էջ 127ա-127բ, 153բ-154ա: Որոշ աղյուսակներում կան հայոց տարեթվերի վերծանություն (թ. 138ա-139ա, 142ա-148ա):

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾՆԻ ՁԵՌԱԳՐԵՐ

ՁԵՌԱԳԻՐ Հմր 667
ԿՈՆԴԱԿ

ՎԱՅՐ՝ Գանձասարի վանք, 1764թ.: **ԳՐԻՉ՝** անհայտ: **ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝** Աղվանից Իսրայել հակաթոռ կաթողիկոս: **ԾԱՂԿՈՂԸ՝** անհայտ: **ԹԵՐԹԵՐԸ՝** 1: **ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝** 42.8 X 34.1 սմ: **ՆՅՈՒԹԸ՝** դեղնած: **ԿԱՋՄ՝** չունի: **ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝** չունի: **ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝** միասյուն: **ԳԻՐԸ՝** նոտրգիր: **ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐ՝** 1բ: **ՏՈՂԵՐԸ՝** 51: **ՁԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝** թռչնագիր: **ՎԻՃԱԿԸ՝** բավարար, էջերը տեղ-տեղ վնասված:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Յի. Քրիստոսի ծառայ տէր Իսրայէլ Կաթողիկոս Աղուանից, փոխանորդ Գրիգորիսի Սուրբ Մեծի Լուսաւորչին Հայոց և Աղուանից և Պտրիրգ Առաքելական սոյս Սրբոյ Եղիշէի Առաքելոյն:

Յորմէ ժամանեալ թուղթ օրհնուե և նամակ պահպանուե շնորհք Առաքելական և Ածային բազմապատիկ օրհնուին նախախնամական գթուին, իջանէ և ծաւալեսցի ի վեր սիրելի և հոգևոր որդւոյդ իմոյ, պրն. Ամբակումիդ, որ ես որդի հոգելոյս պրն. Փիլիպէկին և Ածաշէն տանդ ե բնակուեդ, զարմից և զաւակաց քոց, սիրելի ե բարեկամաց քոց, Ազգաց և ընդանեաց քոց, սիրելի ե բարեկամաց քո, բերկրանօք յօյժ ի ար խնդալ միշտ Ամէն:

Շնորհք ընդ քեզ և երկնաւոր խաղղուին և օրհնուին այ Հօրէ Ամենակալէ և ի տէր մերմէ Յէ Քէ և ի Սրբոյ Հոգւոյն, կենարարէ և Առատածաւալ պարգևտուէ և յամենազօր ի վեր եղիջցէ

և հանգիցէ, եկեսցէ և բնակեսցի առ քեզ, ի հոգիս և մարմինս քոյ.... Ամէն[129]....:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ: Ձեռագրի կոնդակը ցուցադրված է հին Վեհարանի Կաթողիկոսական թանգարանում:

Այսպիսով, ելնելով մեր գիտական ուսումնասիրությունների արդյունքներից՝ ընդգծենք, որ հայկական ձեռագրական մշակույթը, ձևավորվելով դեռևս հնագույն շրջանում (նաև՝ սեպագրությունների ձևով), առավել վառ դրսևորվեց միջնադարում և նոր ժամանակներում: Հայաստանի տարբեր շրջաններում դարեր ի վեր գրվեցին և ընդօրինակվեցին հազարավոր ձեռագրեր, որոնց մի մասն, անցնելով տարբեր պատմանական փուլերի փորձություններով, հասել է մեզ: Վերջիններս հանդիսանում են արժեքավոր պատմական փաստեր ազգային ձեռագրական մշակույթի տարբեր դրսևորումների վերաբերյալ:

Այսպիսով, հիմնվելով՝ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում և Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում պահվող ձեռագրերում զետեղված նյութերի վրա, ընդգծենք, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արցախում գրվել և ընդօրինակվել են բազմաբովանդակ ձեռագրեր, որոնք վկայում են Արցախի հարուստ ձեռագրական ժառանգության մասին: Այդ ձեռագրերի շարքում հատկանշական են նաև հայատառ պարսկերեն ձեռագրերը: Արցախում գրված ձեռագրերն, իրենց ընդհանուր ձևաչափերով, նույնացվում են ինչպես Արևելյան Հայաստանի, այնպես էլ Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններում գրված ձեռագրերի հետ: Այդ ձեռագրերի մի մասն աչքի է ընկնում իր ինքնատիպ մանրանկարչությամբ:

Գիտական հետազոտության հրատարակումը նպատակ ունի լրացնելու Արցախի ձեռագրական մշակույթի պատմության ուսումնասիրության բաց թողնված էջերը:

Բանալի բառեր՝ գրչություն, ձեռագիր, մանրանկարչություն, Ավետարան, հիշատակարան, կաթողիկոս, մշակույթ, Գանձասար, Շուշի, Երից Մանկանց վանք:

---

129 «Էջմիածին», 1988. N 7 (Է), էջ 55-57:



ՁԵՌԱԳԻՐ ՀՄՐ 3592

ՎԱՅՐ՝ Ճալէթ գիւղ (Հիւսիսային Արցախ), 1791 թ.:
ԳՐԻՉ՝ Աբրահամ Շաքեցու հիշատակարանը

SUMMARY

Marine G. Harutyunyan

Institute of History, NAS RA
Ph. D. in Historical Sciences, Senior Researcher

THE MANUSCRIPT HERITAGE OF ARTSAKH IN THE SECOND HALF OF XVIII CENTURY

In historical Armenia, the art of writing was created in ancient times, in the form of engravings. This type of art was widely used in the Middle Ages.

Numerous manuscripts were written and rewritten in the writing centers of different regions of the Eastern Armenia (including Artsakh), some of which were destroyed or taken to other countries due to the Turkish-Persian wars in the second half of the 18th century.

Some of the saved Armenian manuscripts are kept in the Mekhitarist Congregation of Venice and Vienna, in Constantinople, in Jerusalem as well as in European libraries and other private collections. Valuable information about these manuscripts can be found in the collections compiled by H. Tashyan (The catalogue of Armenian Manuscripts of the Matenadaran of the Mkhitarists in Vienna, Vienna, 1895), H. Voskyan (The catalogue of Armenian Manuscripts of the Matenadaran of the Mkhitarists in Vienna, volume II, Vienna, 1963), H. Topchyan (The catalogue of Manuscripts of Vardapet Khachik Dadyan, part I, Vagharshapat, 1898, part II, 1900) O. Yeganyan (The Collection of Armenian Manuscripts of Gandzasar, "Etchmiadzin", 1971, N 4, pp. 59-62) and others.

The role and significance of the manuscript collections of Archbishop Sargis Hasan Jalalyan, Bishop Makar Barkhudaryan, Archbishop Mesrop Smbatyants, Bishop Hovhannes

Shahkhatunyants, Bishop Karapet Ter-Mkrtchyan, Garegin Hovsepyan, Khachik Dadyan, E. Lalayan, O. Yeganyan and others are important in the value system of the art of writing of Artsakh (also - in cuneiform inscriptions).

However, there is little information about the manuscript culture of Artsakh in the second half of the 18th century, especially the manuscripts that have come down to us, both in the above-mentioned scientific studies and in modern literature.

The article presents general information about the manuscripts written in Artsakh in the second half of the XVIII century: year, title, content, time, writing form (bolorgir, notrgir), writing (single column, double column), place, writer, line, client, recipient, notes, the compiler of the manuscript, painter, size, cover, miniature, the condition of manuscript. Those are kept in the Matenadaran after Mesrop Mashtots and in the Mother See of Holy Etchmiadzin.

This scientific research aims to fill in the missing pages in the study of the history of the Artsakh manuscript culture.

Keywords: writing, manuscript, miniature, Gospel, note, Catholicos, culture, Gandzasar, Shushi, Yerits Mankants Monastery.

РЕЗЮМЕ

Марине Арутюнян

Институт истории НАН РА
к. и. н., старший научный сотрудник

РУКОПИСНОЕ НАСЛЕДИЕ АРЦАХА ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ XVIII ВЕКА

Культура рукописания в исторической Армении, сформировавшись в древности (также в виде клинописи), особенно ярко проявилась в средневековье и в Новое время. Многочисленные рукописи были написаны и переписаны в письменных центрах разных областей Восточной Армении (в том числе Арцаха), некоторые из которых были уничтожены или вывезены в другие страны в связи с турецко-персидскими войнами во второй половине XVIII века.

Некоторые из сохранившихся армянских рукописей хранятся в Конгрегации Мхитаристов Венеции и Вены, в Константинополе, в Иерусалиме, а также в европейских библиотеках и других частных коллекциях. Ценные сведения об этих рукописях имеются в коллекциях, составленных деятелями культуры: А. Ташян (Список армянских рукописей Матенадарана Мхитаристов в Вене, Вена, 1895 г.), А. Воскян (Каталог армянских рукописей библиотеки конгрегации мхитаристов Вены. Т. II. Вена, 1963), А. Топчян (Каталог рукописей вардапета Хачика Дадяна, часть I, Вагаршапат, 1898 г., часть II, 1900 г.) О. Еганян (Коллекция армянских рукописей Гандзасара, «Эчмиадзин», 1971, N 4, стр. 59-62) и др.

В системе ценностей искусства рукописания (также - в клинописных надписях) Арцаха важны роль и значение рукописных коллекций архиепископа Саргиса Гасана Джалаляна, епископа Макара Бархударяна, архиепископа Мес-